ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒԺԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ *

Աստղիկ Ազիզյան

Բանալի բառեր՝ Հարավկովկասյան հակամարտություններ, ուժային հանգուցալուծում, վրաց-օսական հնգօրյա պատերազմ, ղարաբաղյան հակամարտություն, տարածաշրջանային դերակատարներ, խաղաղ գոյակցություն, միջազգային կազմակերպություններ:

Բալկաններից և Հյուսիսային Աֆրիկայից հետո Հարավային Կովկասը ևս մեկ ճգնաժամի օջախ է, որի ցանկացած բռնկում սպառնում է ընդգրկելու տարածաշրջանի բոլոր երեք երկրներին: Հարավային Կովկասի կոնֆլիկտայնությունը առավել վտանգավոր դրսևորումներ է ստանում այն պատճառով, որ ցանկացած պահի կարող են դերակատարներ ներգրավվել դրսից: Ըստ չինական հայտնի «Խինհուա» պարբերականի վերլուծաբան Գաոչաո Ինի՝ կողմնակի դերակատարները Հարավային Կովկասում փորձում են օգուտ քաղել էներգետիկայի, անվտանգության ոլորտներում: Վերլուծաբանը նշում է, որ տարածաշրջանով առավել հետաքրքրված ՆԱՏՕ-ն, օրինակ, Հարավային Կովկասը դիտարկում է դեպի Միջին Ասիա և Մերձավոր Արևելք տանող կամուրջ: Գաոչաոն Հարավային Կովկասի կայունությունը, այնուամենայնիվ, տեսնում է երեք հանրապետությունների ներքին քաղաքականությունների մեջ՝ նշելով, որ 2012-2013թթ. ընտրական են լինելու վերոնշյալ բոլոր երեք հանրապետությունների համար, որը կարող է խորացնել ներքին անկայունությունը՝ ընդհանուր ճգնաժամի հանգեցնելով: Նման զարգացումների դեպքում, ըստ չին վերլուծաբանի, Հարավային Կովկասի ճգնաժամը կարող է լայնամասշտաբ պատերազմի վերածվել[1]:

Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ներկայումս գտնվում են «սառեցված» վիճակում: «Հնգօրյա պատերազմը» չնպաստեց «սառեցվածության» վերացմանը, իսկ Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումը Ռուսաստանի և որոշ երկրների կողմից առավել «կայուն սառեցվածության» էջ բացեց Հարավային Կովկասում: Նման հակամարտությունների վտանգավորությունը նրանում է, որ վերջիններս ցանկացած պահի կարող են վերածվել ռազմական բախման:

Վերոնշյալ հակամարտություններից ղարաբաղյանը կարելի է «հալչող» որակել, քանի որ այն պարտվող կողմին իրավիճակն ի շահ իրեն փոխելու համար ավելի ու ավելի ինքնավստահ է դարձնում[2]: Մյուս կողմից՝ հայկական կողմը գտնում է, որ ռազմական ուժի ճանապարհով ԼՂ-ի հարցն արդեն լուծվել է, և ներկայումս հարցը պետք է հասցնել նաև իր տրամաբանական՝ դիվանագիտական ավարտին[3]:

Ուշագրավ է, որ նման պայմաններում ահագնանում են ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային անվտանգությանը սպառնացող մարտահրավերները: Նույնիսկ միջազգային իրավունքի սկզբունքները, որոնք կոչված են հետ պահելու ուժի կիրառումից, այսօր դարձել են զանազան պետությունների համար շահարկման միջոց:

*Այս ամենից կարելի է հետևություն անել, որ **անվտանգություն** բառը Հարավային Կովկասում համընդհանուր փոխզիջմամբ է պայմանավորված: «Անվտանգությունն*

---

* Հոդվածն ընդունվել է 02.12.15:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

*ընդհանուր առմամբ **մասնավոր** և **հասարակական** բնույթ է կրում: Սակայն Հարավային Կովկասում այդ երկու ոլորտներն էլ փակուղի են մտել»[4]: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ ներկայումս աննկարագրելի ռազմական մրցավազք է ընթանում: Այսպես՝ ադրբեջանական բանակը կազմում է 95 հազ. մարդ, հայկականը՝ 53 հազ., իսկ վրացականը՝ 30 հազ.: Միևնույն ժամանակ, ղարաբաղյան, աբխազական և հարավօսական զորքերի քանակը հասնում է համապատասխանաբար 18-20 հազ., 5 հազ., և 3 հազ.-ի[5]: Մեզ հայտնի է, թե ռազմականության գերհագեցումը ինչ աղետալի հետևանքներ ունեցավ և մինչ օրս շարունակում է այդպիսին մնալ Մերձավոր Արևելքում: Ուստի միջազգային դերակատարները և տարածաշրջանով հետաքրքրված պետությունները, կարծում ենք, հաշվի կառնեն մերձավորարևելյան փորձը: Ասվածից, իհարկե, չի կարելի հետևություն անել, թե հեղինակը ռազմական ներուժը երկրորդական է համարում: Պարզապես չպետք է մոռանալ, որ արդի ժամանակաշրջանում կարևորագույն դեր են հատկացված գաղափարախոսական-տեղեկատվական, սոցիալ-տնտեսական, ռեսուրսների տիրապետման ոլորտներին: Այդ են վկայում նաև խոշոր տերությունների ներկայիս «մրցավազքը», որը, ի տարբերություն դասական «սառըպատերազմյան» մրցավազքի, ռազմականի հետ առաջնային է համարում նաև վերոնշյալ ձեռքբերումները: Ինչպես տեսնում ենք, մրցակցությունը ամենուր է. ինչպես հակամարտություններով հագեցած Կովկասում, այնպես էլ դիվանագիտական միջոցներով բոլոր հակամարտությունները կարգավորող Արևմտյան Եվրոպայում, որտեղ վաղուց արդեն սովոր են մրցակցելու տնտեսական և տեղեկատվական հարթություններում: Այսպես՝ ասվածի ցայտուն օրինակներից էր ֆրանսիական շուրջօրյա հեռուստակայանի ստեղծումը, որը պետք է մրցակցեր CNN-ի հետ, և ըստ նախագահ Ժ. Շիրակի՝ դիմակայեր «անգլոսաքսոնյան մշակութային իմպերիալիզմին»[6]:*

Հայաստանում, ի տարբերություն Ադրբեջանի, հատկապես վերջին տասնամյակից ի վեր հնչում են բազմաթիվ առաջարկներ, որոնք կարող են բանակացային փուլում մեծացնել փոխադարձ վստահությունը: Այսպես՝ հայկական կողմը բազմաթիվ առիթներով առաջարկել է ժողովրդական դիվանագիտության կիրառման տարբերակը: Դա նախատեսում է ոչ պետական մակարդակով մի շարք կառույցների ձևավորում, որը հնարավոր կդարձնի հայ և ադրբեջանցի ազատ քաղաքական գործիչների, լրագրողների, գիտնականների շփումը: Ադրբեջանական կողմը, շփում ստեղծելու գործում ընդունելով մարդկային գործոնի կարևորությունը, այնուամենայնիվ հրաժարվում է նման ծրագրից՝ համարելով, որ ղարաբաղյան հակամարտությունը անհատական մոտեցման հարց չէ, ուստի, ըստ վերոնշյալի՝ ժողովրդական դիվանագիտությունն անօգուտ է կիրառել տվյալ խնդրում[7]:

Ադրբեջանցիների կողմից համանման արձագանքի է արժանանում նաև տնտեսական համագործակցության առաջարկը: Փաստորեն ադրբեջանական կողմը դեմ է ղարաբաղյան հակամարտության կարգավորման ցանկացած այլընտրանքի:

Կարծում ենք՝ նման ակնհայտ նպատակի առկայության դեպքում հայերի և ադրբեջանցիների ընդհանուր պետականության շրջանակում միասնական կազմավորում ստեղծելու մասին բոլոր խոսակցությունները անհիմն են և անիրագործելի:

Ըստ Ս. Սարումյանի՝ Ադրբեջանը գիտակցում է պատերազմ վերսկսելու ծանր պատասխանատվությունը, ուստի, չնայած ռազմատենչ կեցվածքին՝ ղարաբաղյան զինված բախման վերսկսումը հավանական է մի քանի դեպքերում[8]:

- *Երբ Ադրբեջանը զգա իր ռազմական բացարձակ առավելությունը: Դեռևս ղարաբաղյան պատերազմի տարիներին ղարաբաղյան կողմը առաջնորդվում էր զորքերի և ռազմական տեխնիկայի առավելությամբ հաջողության հասնելու տրա-*

մաբանությամբ: Պատկերը անփոփոխ է նաև մեր օրերում: Սակայն, կարծում ենք, որ ադրբեջանի՝ ուժի չդիմելու շարժառիթներից է նաև այն, որ վերջինս գիտակցում է թվային առավելությամբ հաջողության չհասնելու հնարավորությունը:

- Արդի աշխարհում ցանկացած հարցում կարևոր է գերտերությունների դիրքորոշումը, մանավանդ այնպիսի տարածաշրջանում, ինչպիսին Հարավային Կովկասն է, մանավանդ այնպիսի խնդրում, ինչպիսին դարաբաղյան հակամարտությունն է: Իսկ «հնգօրյա» պատերազմում վրացական բլիցկրիգային ռազմավարության տապալումը ադրբեջանական կողմին խորհելու առիթ է տալիս: Ուստի այստեղից հետևություն, որ Ի. Ալիևը պատերազմ կսկսի գերտերությունների եթե ոչ համաձայնության, ապա գոնե չեզոքության դեպքում, իսկ դա, վստահ ենք՝ երբեք չի լինի, քանի որ միջազգային հանրության համար դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը Կովկասում չհեղինակազրկվելու միակ միջոցն է: Բացի այդ՝ առանց այն էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի «ապարդյուն» գործելաոճը լայն քննարկումների տեղիք է տալիս, և միջազգային հանրությունը պարտավոր է հակառակն ապացուցել:
- Ադրբեջանը կարող է նաև ներքաղաքական անկայունության կարգավորմամբ դրդված պատերազմի գնալ: Դա կարող է իրական դառնալ, օրինակ, Մերձավոր Արևելքում մեկնարկած հեղափոխությունների և հակակառավարական ընդվզումների ալիքի՝ Ադրբեջան ներխուժելու հետևանքով[9]: Այդ սցենարի հավանականությունն ավելի մեծացավ, երբ «The Wall Street Journal» թերթը հրապարակեց այն երկրների վարկանիշային աղյուսակը, որոնցում սոցիալական ցնցումներն ու հեղափոխություններն ավելի հավանական են դրանում: Դա, թերևս, պայմանավորված է նրանով, որ գրականության մեջ շրջանառության մեջ էր դրվել սիրիա-ադրբեջանական մոդելի մասին դրույթը, քանի որ թե' Սիրիայում Հաֆեզ Ալ-Ասադի (1971-2000) և թե' Ադրբեջանում Հեյդար Ալիևի (1993-2003) մահից հետո իշխանության էին եկել վերջիններիս որդիները՝ դրանով իշխանությունը դարձնելով «դինաստիական», որտեղ կարևորը «անհատի պաշտամունքն» է [10]:

Այդուհանդերձ, եթե ադրբեջանական կողմը պատերազմ սկսի և չկարողանա ռազմական ուժով գրավել ողջ ԼՂ, ապա դա, ինչպես հավաստիացնում են հայ փորձագետները, քաղաքական ինքնասպանություն կլինի Ադրբեջանի համար, իսկ նոր հաստատված հրադադարը առավել ագրեսիվ կսառեցնի թշնամանքը ևս մեկ սերնդի համար:

Մյուս կողմից՝ հայկական կողմը սխալվում է՝ կարծելով, որ ժամանակն աշխատում է իր օգտին և ԼՂ-ն, ինչպես Կոսովոն, Աբխազիան և Հարավային Օսիան կընթանան դեպի մասնակի միջազգային ճանաչում: Ռուսաստանը շարունակում է դարաբաղյան հակամարտությունը տարանջատել հարավկովկասյան մյուս էթնոքաղաքական հակամարտություններից. հետևաբար, պետք է եզրակացնել՝ այն կարգավորելու հարցում ռուսական մոտեցումն այլ է լինելու:

Տեղին է նշել, որ դարաբաղյան հակամարտության կարգավորման վրա մեծապես ազդել է «հնգօրյա պատերազմը»: Ռուսաստանը, վրացական ռազմական հարձակմանը հակահարված տալով, ապացուցեց միջազգային հանրությանը և, մասնավորապես Ադրբեջանին, որ նման տարբերակով հարցի լուծումը հակահարված է ստանալու Ռուսաստանի կողմից:

Ադրբեջանը, հետ չմնալով միջազգային կառույցներից, առանձին փորձագետների և քաղաքագետների մակարդակով կարծիք հայտնեց, որ «օգոստոսյան պատերազմը» ավելի շատ հեղինակազրկեց վերջինիս: Սակայն, կարծում ենք, չպետք է անտեսել, որ

Ռուսաստանը կարողացավ հիմնավորել իր քայլերը 2008 թ-ի պատերազմի ընթացքում: Այսպես՝ Հարավային Օսիայում էին գտնվում ռուս խաղաղապահները, և Ռուսաստանը իր ռազմական հակահարվածը Վրաստանի դեմ հիմնավորեց որպես սեփական քաղաքացիներին պաշտպանելու քայլ: Մյուս կողմից՝ անհերքելի էր, որ, անկախ շարժառիթների բազում լինելուց, Վրաստանը մարդկության հանդեպ հանցագործություն էր գործել:

Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչումը ամրապնդվեց Ռուսաստանի և վերջիններիս միջև 2008 թ. նոյեմբերի 24-ին «Գործընկերության, համագործակցության և փոխօգնության» պայմանագրի ստորագրմամբ: Դա ենթադրում է վերոնշյալ պետությունների ռազմա-քաղաքական համագործակցություն: Ռուսաստանը նաև միակողմանիորեն դուրս եկավ Աբխազիայի հանդեպ տնտեսական պատժամիջոցների կիրառման գործընթացից: Վերջինիս հանքային ռեսուրսները, ինչպես նաև Հարավային Օսիայի սոցիալ-տնտեսական բարենպաստ իրավիճակը խթանեցին նորանկախ երկու հանրապետությունների և Ռուսաստանի միջև սոցիալ-տնտեսական համագործակցությունը[11]:

Այնուամենայնիվ, Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչումը չլուծեց ռազմական գործողությունների վերսկսման վտանգը, քանի որ հակամարտող կողմերի միջև այդպես էլ չկնքվեց հաշտության պայմանագիր: Իսկ նախկին հակամարտությունների անմիջական և ոչ անմիջական մասնակիցները շարունակում են միմյանց անընդհատ լարված իրավիճակում պահել: Այսպես՝ 2011թ. Աբխազիայի նախագահական ընտրությունների լեգիտիմության բացակայության վերաբերյալ ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի - պաշտոնական հայտարարությունները, կարծում ենք, Վրաստանին շարունակում են կորցրածը ետ բերելու հույսով համակել: Վերջինս «հնգօրյա» պատերազմից հետո հայտնվեց 1990-ականների կեսերին հայտնի պատերազմներից հետո ստեղծված նույն իրավիճակում: Վրաստանը, ինչպես և հատուկ է բլիցկրիգային պատերազմ վարած պետությանը, ներկայումս մտադիր է կամ հաշտվել տարածաշրջանում Հարավային Օսիայի և Աբխազիայի ճանաչումից հետո ստեղծված իրավիճակին, կամ հույսը դնել Արևմուտքի կողմից Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու վրա, կամ էլ նորից ռազմական գործողություններ սկսելու մասին մտածել[12]: Կարծում ենք՝ հնարավոր երեք դրսևորումներից առավել հավանական է առաջին տարբերակը, քանի որ առաջիկա տասնամյակում դժվար Վրաստանը գնա ռազմական բախման՝ այս անգամ արդեն կանխավ գիտակցելով, որ հակամարտող կողմ Ռուսաստանն է լինելու: Ինչ վերաբերում է Ռուսաստանի և մի քանի երկրների կողմից Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչմանը, ապա դա այլևս փաստ է, որից Ռուսաստանը հետ քայլ չի կատարի: Փաստորեն այդ ամենից կարելի է եզրակացնել, որ ղարաբաղյան խնդիրը ներկայումս առավել շահեկան դիրքերում է գտնվում, որի կարգավորման համար այսպես թե այնպես Ադրբեջանը ստիպված է հաշվի առնելու վրացական նախադեպը:

2008 թ. օգոստոսյան պատերազմը տարածաշրջանում նոր ստատուս քվո հաստատեց, որով ակնհայտ դարձավ, որ Հարավային Օսիան և Աբխազիան այլևս երբեք Վրաստանի կազմում չեն ընդգրկվի: Միևնույն ժամանակ դա ստիպեց ղարաբաղյան հակամարտության հիմնական դերակատարներին ընդունելու, որ ԼՂՀ-ն անհնար է պատկերացնել Ադրբեջանի կազմում: Այդ է վկայում նաև նախագահ Դ. Մեդվեդևի՝ Ադրբեջանի և Հայաստանի նախագահներին 2008 թ. ուղղված կոչը, որ ավելի լավ է անվերջ բնակացություններ վարել, քան ապրել «օգոստոսյան պատերազմի» ծանր հինգ օրերը[13]: Հարավային Կովկասի բոլոր երկրների, մասնավորապես Ադրբեջանի համար 2008 թ. օգոստոսյան պատերազմը ապացույց էր առ այն, որ քաղաքական ինք-

նուրույնություն չունեցող պետությունը, պատերազմի գնալով, դատապարտված է պարտության և հետագա հոգեբանական և նյութական կորուստների: Եվ եթե սպառազինության կորուստը ժամանակի ընթացքում հնարավոր է վերականգնել, ապա նույնը չի կարելի ասել պատերազմ սանձազերծած պետության վարկանիշի մասին: Ասվածի տիպիկ օրինակ է Վրաստանը, որը բոլորից շատ տուժեց «հնգօրյա պատերազմից», քանի որ ավարտվեց նրա «ժողովրդավարության փարոսի» իմիջը, որը Հարավային Կովկասում եվրոպական արժեքների գլխավոր քարոզողն էր և փորձում էր կառավարման արդյունավետ համակարգով ներկայանալ աշխարհին: Այդպիսով՝ 2008թ -ով հետածգեց ՆԱՏՕ անդամագրվելու հեռանկարները:

Ուշագրավ է, որ էթնոքաղաքական հակամարտությունների կողմերը հաճախ հիմնվում են իրենց ռեսուրսային առավելության վրա, որը ոչ մի ընդհանուր բան չի կարող ունենալ «բանակացային ուժի» հետ, քանի որ վերջինս ենթադրում է հակառակորդ կողմին հարկադրել անելու ցանկալին՝ առանց բռնության: Ռեսուրսային առավելությունը կարող է որոշիչ լինել կախված այն հանգամանքից, թե ով է հակառակորդ և ինչ հարցի շուրջ է անհամաձայնությունը[14]: Ստացվում է, որ սպառնալիքների և նախազգուշացումների միջոցով բանակցողների վրա ազդելու միջոցներն անօգուտ են, մինչդեռ առաջարկները գրեթե միշտ առավել արդյունավետ են:

Ռազմական ճանապարհով էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման կողմնակիցներին հարկ է ընդունել վերջապես, որ խաղաղության հասնելու համար նույնպես պայքարել է պետք, և առավել ճիշտ է պայքարել խաղաղության, քան պատերազմի համար:

Կարծում ենք վերոնշյալին հասնելը անհնարին չէ, եթե հակամարտող կողմերը կարողանան կիրառել հայտնի և կարևոր երկու սկզբունքները. [15]:

1. *Տարանջատել մարդկանց խնդիրներից,*
2. *Շեշտը դնել շահերի, ոչ թե դիրքորոշումների վրա:*

Ի վերջո, եկել է ժամանակը հակամարտությունը դիտարկելու նաև հակառակորդի տեսանկյունից, որը իրականում հեշտացնում է բանակցային գործընթացի վրա ազդեցություն գործելու հանգամանքը: Հակառակորդի տեսակետը հասկանալը ամենևին չի ենթադրում համաձայնել վերջինիս հետ: Դա պարզապես նեղացնում է հակամարտության շրջանակը և օգնում վերածևակերպելու սեփական շահերը[16]:

Թերևս այն պահից ի վեր, երբ էթնոքաղաքական հակամարտությամբ կսկսեն զբաղվել մասնագետները, անտեսված չեն մնա վերոթվարկյալ բանակցային նրբությունները, որոնք կօգնեն ընդունելու, որ գոյություն չունի ռազմական ճանապարհով այնպիսի կարգավորման տեսակ, որը հակամարտության կողմերին խաղաղ հեռանկարային երաշխիք կընձեռի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գառչաո Ին, Հարավային Կովկասում ճգնաժամը կարող է լայնամասշտաբ պատերազմի վերածել.<http://tert.am/am/news/2011/12/27/xinhuanet/>
2. «Անալիտիկոն», № 22/ 2009 թ. փետրվար, էջ 56
3. ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի 29.07.2008թ. մամլո ասուլիսից: <http://www.karabah88.ru/press2008/07/0729.html, http://www.panarmenian.net/rus/politics/news/26640/>
4. Валл Т. Де.,Угрозы безопасности на Южном Кавказе, “Вестник Европы”, 2002, № 7-8, стр. 35-38

5. Цыганок А. Д., Пороховая бочка Евразии. Милитаризация Кавказа угрожает опасными последствиями, “Независимое военное обозрение”, 2 сентября, 2009
6. <http:/www.guardian.co.uk/print/0,329654306-1110633.00html>
7. Тюркские народы Кавказа вызывают пристальный интерес, “Центральная Азия и Кавказ”, 1(19) 2002, стр.113-114
8. Սարումյան Ս., Ինչպես հաղթել Ադրբեջանին կամ՝ նկատառումներ ապագա պատերազմի ռազմավարության մասին, «21-րդ Դար», № 6 (40), 2011, էջ 113:
9. Նույն տեղում:
10. Փաշայան Ա., «Արաբական սցենարի» հավանականությունն Ադրբեջանում, «Գլոբուս էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», № 2, 2011
11. Նորանկախ հանրապետությունների և Ռուսաստանի միջև ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական համագործակցության վերաբերյալ մանրամասն տե՛ս Цыганок А. Д., Война на Кавказе 2008: русский взгляд. Грузино-осетинская война 8-13 августа 2008 года, АИРО, М., стр. 255-271
12. Международный общественный журнал “Свободная мысль”, М., 2010, № 4 (1611), стр. 71
13. Дмитрий Медведев: Августовская война 2008 года стала "серьезным уроком" для Армении и Азербайджана:<http://regnum.ru/news/1432539.html#ixzz1WRRm7qCc>
14. Fisher R., Ury W., Getting to Yes: negotiating agreement without giving in, 2nd ed, Penguin Books, USA, 1991, p. 178
15. Տե՛ս նույն տեղում, էջ 10:
16. Տե՛ս նույն տեղում, էջ 24:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների ուժային հանգուցալուծման հնարավոր զարգացումները

Աստղիկ Ազիզյան

Հարավային Կովկասի երեք էթնոքաղաքական հակամարտությունները 1990-ականներից ռազմական բախումների փուլեր են անցել, որոնք ավարտվեցին մեխանիկորեն սահմանված հրադադարներով, որոնց չէին նախորդել ո՛չ հակամարտություններին հաջորդող մանրակրկիտ բանակցային փուլը, ո՛չ էլ վստահության մթնոլորտի հաստատումը:

Մյուս կողմից՝ Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումը ևս մեկ անգամ ապացուցելու եկավ, որ կարգավիճակը ճանաչվում է, իսկ հակամարտությունը ավարտվում գերտերության կողմից համապատասխան քայլով: Ակնհայտ է, որ հակամարտությունների խաղաղ կարգավորմանն ուղղված միջազգային կառույցների գործունեությունը ներկայումս համակարգային ճգնաժամ է ապրում, որի կուրսի փոփոխությունը իրական կլինի միայն «խաղաղություն հարկադրումով»:

РЕЗЮМЕ

Возможные последствия силовых решений южнокавказских этнополитических конфликтов

Астгик Азизян

Ключевые слова: *южнокавказские конфликты, силовое решение, Грузино-Осетинская пятидневная война, Карабахские конфликты, региональные исполнители, мирное существование, международные организации.*

Три этнополитические противостояния на Южном Кавказе с 1990-х прошли стадии силовых конфликтов, которые закончились механическими договорами о прекращении огня, которым не предшествовали ни этап кропотливых переговоров, ни создание атмосферы доверия.

С другой стороны, признание независимости Южной Осетии и Абхазии доказало, что положение (статус) признается, а противостояние заканчивается соответствующим шагом сверхдержав. Очевидно, что деятельность международных организаций, направленная к мирному урегулированию противостояний, в настоящее время находится в системном кризисе и изменение курса будет реальным только при “принуждении к миру”.

SUMMARY

The Possible Consequences of Military Settlement of Ethnopolitical Conflicts in the South Caucasus

Astghik Azizyan

Keywords: *The South Caucasus conflicts, power denouement, Georgian - Ossetian five-day war, the Nagorno-Karabakh conflict, regional actors, peaceful coexistence, international organizations:*

Three ethnopolitical conflicts of the South Caucasus since 1990s have passed the same stages. These military conflicts ended with mechanically defined ceasefires and were neither preceded by the stage of detailed negotiations nor followed by the atmosphere of trust.

On the other hand, the recognition of independence of the South Ossetia and Abkhazia proved once again, that the status can be recognized and the confrontation ends after the corresponding activities of the superpowers. It is obvious that the activities of international structures aimed at peaceful settlement of conflicts are now in systematic crisis, and the change of its course will be possible only through “peace enforcement”.